

բոլոր սուրբ անձինքն, և բազմաթիւ թեմաքանութիւն ի տուն Մեծ. Մ. Յարութիւն է քննարկի Հաճի Համարաձուռման, Պարանեան, որ քաղաքիս ամենէն վառաւոր տունն է և Ռուսաց բանակին զօրավար վաղվաքի հոն հաստատած էր իւր բնակութիւնը պատերազմէն վերջը քանի մը ամիս:

Բնթիւքէն յետոյ տեղեկութիւններ հարցոյց Հայ հասարակութեանը միջնակին վրայ, և յայանեց որ հետեւեալ առաւօտ պիտի այցելու թիւն ընէ եկեղեցւոյն և դպրոցին: — Եղեմեմբերի ամսոյս մէկին հինգշաբթի առաւօտ՝ քահանայն և ժողովուրդը ընդունեցան ՚ի դռնն եկեղեցւոյն Նորին Բ. Սրբապետութիւնն, որ եկեղեցւոյ մէջ մայթանքներ ըսեցին յետոյ ժողովուրդը մը խիթարեց և օրհնեց: Անմիջապէս դպրոց դնաց քաղաքիս պատուաւորացի հետ և աղայքը քննեց, որ միակ հասարակ ընթերցանութիւն գիտէին, որով իւր ցաւը յայանեց հասարակութեան և յորդորեց որ ոչ միայն դպրոցը բարեկարգեն, այլ և աղվիսնց դպրոց մ'ալ հաստատեն: Էւ տեսնելով որ ոչ թաղական խորհրդէ կայ և ոչ Հոգաբարձութիւն, հրապարակեց իրեն ընդհանուր ժողով գումարել:

Նոյն երեկոյն հաւաքուեցաւ ժողովուրդը, որոյ մի առ մի բացատրեց Լուսինեան սրբազան՝ որ սրբիւնութեան չարիքը իր թիւնութեան անհոգութեան ու պէտքը, մանկ աղջկայոց դպրոցին բարեկարգութեան հարկաւորութիւնը, և աղվիսնց ալ դպրոց մը բանալու անմիջական հարկը: Ժողովուրդը խոստացաւ սրբազան Այցեւորին որ տուած խրատները գործադրէ, բայց աղաչեց որ գէթ շաբաթ մը քովերին մնայ որպէս զի պէտք եղածները անձամբ անօրինէ: Լուսինեան Սրբազանը յայտնեց որ ինք երկու օր միայն միտք ունի մընալ քաղաքս, և առաջիկայ չուէնաւով մեկնիլ, ըստ որում ժամանակը խիստ նեղ է: Սակայն ժողովուրդը և Մ. Յարութիւն աղագետէր է: Քննարկի որ քաղաքիս ամենէն երեւելի անձն է, իւր եղբորը Մ. Մարթոս է քննարկի հետ այնքան սրտառու կերպով թախանձեցին, որ մինչև միտ չողեւաւին դալը մնայ ՚ի Սիւլիսթը: Գթալով այդչափ ժամանակէ ՚ի վեր անխնամ դրացած եկեղեցւոյս և դպրոցիս վրայ, որ Գեր. Խորէն Սրբազանը յազուեցաւ և խոստացաւ որ նոցա խնդիրը կատարէ: Ժողովուրդը անպատում յնձուրեցաւ Մ. Այն համբուրեց և խոստացաւ որ ամեն ջանք ընէ Ն. Սրբապետութեան հրամանները գործադրելու: Անմիջապէս այցելու Սրբազանը թաղական խորհուրդ մը կազմեց, թախանձեց իրարեւոր Մեծ. Մ. Մարթոս է քննարկի Պարանեան, նոյն պէս և Հոգաբարձութիւն մը, որք առ ժամանակեայ պաշտօն պիտի վարեն մինչև որ գործերը կարգի մտնեն և պատրաստուին սկսիլ Սահմանադրութեան գործադրութիւնը:

Հետեւեալ օրը այն նորակալմ խորհուրդներուն հետ զբաղեցաւ եկեղեցւոյն և դպրոցին բարեկարգութեանը վրայ, հնարքներ առաջարկելով հասոյթները դոյացնելու, ըստ որում ոչ եկեղեցւոյն և ոչ դպրոցը բնաւ եկամուտ մը չունին, և հաստատութիւն ալ՝ որ եօթնամասուն տունէ կը բաղկանայ, մեծաւ մասամբ աղքատ է և անկարգ որդւոց կրթութեան համար թոշակ վճարելու դպրոցին: Առաջարկութեամբ նորին Բ. Սրբապետութեան հանգանակու

թեան տեար մը բացուեցաւ և ամեն մէկերնիս մեր կարողութենէն մեր ջանացանք ստորագրուիլ, որպէս զի քահանայն վարժապետաց աւ վարժուհւոյն գէթ մէկ տարեկան թոշակները ապահովուին:

Կիրակի օրը պայծառ և դեղեցիկ օդ մը կընէր, որ հազուադէպ է մեր կողմերը այս եղանակին. Գեր. Լուսինեան Բ. Սրբազանը մեր աղքատիկ ժողովուրդեան թախանձաւաց զիջանելով Սուրբ Պատարագ մատուց և խիստ աղքատ քաղաքով հասարակութեան սիրտը բորբոքեց Հայաստանեայց եկեղեցւոյ և Հայրենիքի սիրով: Խեղճ ժողովուրդը՝ որ այսպիսի ընտիր քաղաքներէ զուրկ ենք մնացած, արցունքներ կը թափէինք, Աստուծոյ փառք տալով որ Հայոց ազգը երեսնէ չի թողուր, ու Մեծին Խորհնացւոյ հոգին և սիրտը կրող խորէն Սրբազան մը պարգեւած է մեր հայրենեայ հովիւ և միւրթարիչ:

Հանդիսին ներկայ էին բոլոր երեւելիք Պուլիարաց Գունաց և Հըրէից, որ մեզի երանի կուտային այսպիսի լուսաւորեալ և անուանի Հովիւ մը ունենալուս: — Սիւլիսթըի բոլոր պաշտօնեաները և անոնց գլուխ Նաչարինքը (պատգամ) համադրեալներով (խորհուրդ) ներկայ էին Ս. Պատարագին: Մասնաւոր ըսելու թէ Սրբազան այցելուին դալտեան հետեւեալ օրը վտւթայան այցելութեան գալ Նաչարինքն իւր պաշտօնատարներով: յետոյ Պուլիարաց և Հըրէից ազգին երեւելիներն զատ զատ, և խորին մեծարանքներ յայտնեցին Լուսինեան Սրբազանին: Մասնաւորապէս Հըրէիցը առաջնորդութեամբ խախտանք խնդրեցին որ իրենց աղքատ բարեհաճի միւրթարիչ, պատուելով իւր այցելութեամբը:

Ս. Պատարագէն զինն Նաչարինքն և բոլոր երեւելիք քաղաքիս՝ դարձեալ եկան այցելութեան առ Նորին Բ. Սրբապետութիւն, և զմայրեցան նորա քաղաքավարութեան և լեզուագիտութեանը վրայ:

Նաչարինքը այն հանդէսը հեռագրեց առ բարձրագոյն իշխանը Պուլիարից, և իրաւի արժանի էր հեռագրուելու, որովհետեւ Սիւլիսթըի մէջ մեր ծերերն անգամ երբէք տեսած չէին այսպիսի շքեղ Աղքային հանդէս մը, զոր բաղդ ունեցանք վայելել շնորհիւ Գեր. Լուսինեան Սրբազան Հօր: Պէտք է մեր երախտագիտութիւնն յայտնել նաեւ Ամեն Սրբազան Պատրիարք Հօր, որ բարեհաճեցաւ հայրաւոր գթալ Պուլիարից անխնամ մնացած Հայոցըս վրայ, և այսպիսի անընդհան հովիւ մը մեզ առաքեց, որ իւր գիտութեամբ, մարդասիրութեամբ, և շուքին ծանրութեամբ մեծ պատիւ կը բերէ Ազգիս, և օտարներուն նախանձը կը չարժէ մեր վրայ:

Գերապետը Լուսինեան Սրբազան չարաթ մը անընդհատ առաւունքնէ մինչև գիշեր ամեն օր աշխատեցաւ մեր եկեղեցւոյն և դպրոցին բարեկարգութեանը վրայ, և երեսի վրայ մնացած շատ տարիներէ ի վեր շատ մը դատեր և գործեր կարգադրեց և լուծեց, որով ամբողջ հասարակութեան սիրտը գրաւեց յանձունն շնորհակալութեամբ: Ուստի և մեծ ցաւ դպրոցին և կ'դպանք իւր մեկնելուն վրայ: Բայց ասով միայն կը միւրթարուինք որ՝ մեր Ուսմանից աղգակից եղբարքն ալ մեզի պէս բաղդ պիտի ունենան վայելել Նորին Բ. Սրբապետութեան այցելութիւնն ու հայրենասիրական եռանդուն քորովներն և աղգաչափ բարեկարգութիւնները:

Գերապետը Լուսինեան Սրբազան Պուլիարից Հայոցս վրայ ցցուցած սիրոյն և խնամոյցը վերջին նշանն մ'ալ առաւ, և մի պաշտօնագիր դրկելով առ վտւթ. Նախագահն պաշտօնէից Պուլիարիական իշխանութեան, յորում Պուլիարից Հայոցն կը յանձնէր պաշտպանութեան Բարձր. Ալէքսանտր իշխանին և իւր նախարարացն:

Ընդունելէք Մեծ. տէր մեր շնորհակալութեան զգացմանց բացատրութիւնը:

Ի դիմաց հասարակութեան
Ճանձն. Ա. Շէրման
Զատիւն Հաճի Մ. Թաքաւալեան
Մախի. Դ. Բէրէնեան

... խաղաղասէտ.

Առ Դեմոքրատիկ Հրատ. Ե. Մ. Բէրէնեան
Ազիւ Պարոն

«Պիլիսոփայական բառարան»-ին նշանակումով Զեր արդարացի բարեբանաց և դիտողութեանց համար փառաքեցայ շնորհակալեաց մի հակիրճ բան դրել: Այլ ոչ թէ միայնակ եմ եմ:

Ընդ իս են անուշտ մեր խնամտուն գրագիտաց լին հաւանութիւնը, մեր վտւթախոս պատանեաց եռանդուն ձայնակցութիւնը և ընդ իս մանաւանդ մեր այն սրբազան և անմահ նախագահ երկնածափալ գոհունակութիւնը, որոց նուիրական անուանք այնչափ անձկանօք յիշատակած էք դուք: Երբ Զեյ նման ընտիր ընտիր պատանիք պաշտպան կը կանգնէին ճշմարտութեան՝ որոյ համար գոհունակ հարք մեր սիրտները, ու վառեալ սուրբ սիրով ուխտաւոր կը նուիրէք առ հայրենիս՝ զոր նոքա իրենց արեւմտեան երկրներն, հաւատացէ՛ք որ նոցա ցամաքեալ դարաւոր սովորոյն անգամ կըզգան ու կը ցնծան. այնչափ կը սիրէին նոքա գերադույն Ս. Կրօնն ու տենչալին Հայաստան:

Ընդունեցէք ուրեմն, ազիւ պատանի, անցելոյն ներկային ու ապագային օրհնութիւնքը որք արժանաւոր բաժին են Զեյ և Զեր նմանաց, իսկ ընդունին նոքա՝ ներկային շնորհք, որոնց՝ որպէս զի, ապագային բաժին չլինի անէ՛ծքը: Իսկ յետ երաւակիւ պատասխանելոյն Զերոյ չկամիմ ոչինչ յաւելուլ, բայց զայս ինչ: Այն պատկառելի անձինքը զորս դուք կը փառաքէք արեւմտեան յաւուցանել, այնչափ բարձր են, որ չըկարեն լսել այդ մեռեալին (փիլիսոփայական բառարանին) թաղարան վերջին մաղթանաց, զի այդ մեռեալը մեռած, ծընածին պէս մեռած, ամբողջապէս մեռած է:

Եւ մեռած են այն արտասուելի ժամանակները, յորս Հայը իւր ճշմարիտ շահուցը անգիտակ, խախտուէր դուցէ ըզնմանի Պ. Աղատախոհեանի. այլ այնպիսի մեծախորհուրդ և օրհնեալ գլուխներ, զորս Աստուած գիտէ յարուցանել ի հարկին, ծանեան կարի իսկ և ծանուրին թէ յորում պէտք է հաստատուել Ազգային փրկութեան հիմը, թէ այդպիսի սուրբ գործոյ ինչ առաւել սրբաւոր խորհիւ քան պահպանելով զլէմն ամբողջութեամբ Ս. Կրօնն քրիստոնեանից, որ ունի նախաճառն՝ Սրբութիւն, տէր և խաղաղութիւն, Աղատութիւն, լոյս և հաստատութիւն, որովք վերջապէս ամբողջ մարդկային ազգին յառաջագիտութիւնը, միութիւնը ու երջանկութիւնը որ և կայ ու մնայ անխառնարհ թաղարանութեամբ, պարծանք համայն ազանց լուսաւորեաց պարծանք և Հայոց:

Ազիւ Պարոն Հրատ, եթէ Զեր ըզգացմանց արժանաւոր վայելչութեամբ չէ ներկայս, գէթ Զեր սրտին արժանաւորագոյն անկեղծութեամբ է, և այնչափ անկեղծ, որչափ անձանօթ է Զեյ ստորագրողը, այլ որ կը բաղձայ ինիլ այսուհետեւ

Զեյ անձնանուէր բարեկամ
Թաքաւ. Դ. Մեքանեան

11 նոյ. 1879
Ռ. Հրատ Կ. Պոլսոյ

Ա. Զ. Դ.

ՕՐԱՑՈՅՑ

1880 ՏԵՐ ԵՐԵՄԻԱՅԻ

Դին Մէհիա դրամ 1 զր:

ՕՐԱՑՈՅՑ

1880 ԳՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Դին Մէհիա դրամ 1 զր:

ՕՐԱՑՈՅՑ

1880 Ս. ԵՐՈՒՍԻՄԱՅ

Դին Մէհիա դրամ 1 զր:

ԸՆԴՈՐՁՄԱՆ ՕՐԱՑՈՅՑ

1880 ԶԱՐԲԱՐԵԱՆ

Դին Մէհիա դրամ 2 զր:

Կը ծախուին ամէն գրաւմանաւոր քով և Զարգարեան վաճառատունը վաւերաւեալ Հիւանդանոցի կնքով ընդարձակ օրացոյցը կը պարունակէ 80 երեսէ բաղկացեալ յաւելում մը այլապէս և կարեւոր նիւթերու, որք են, Բաղաւաղութիւն, Զարգարեան, ու մաքրութիւն. Եւնք Եւնքի վրայ. Ընդհանրապէս այցելութեան վրայ. Նամակագրութիւն. հացիկերոյթ տալ: Սկզբունք վայելակետուն քաղաւած: Կրթութեան Ընդհանրական Կրթութեան: Բարկութիւն, վախ, Տխրութիւն կամ վիշտ. Նախանձ, Յուսահատութիւն: Այլեւս յայտնաւորուեցաւ մահ. Ինչ ինչ պատշեմներ երկար առեւն պահելու կերպեր: Զարգացում. Եւնք Կրթութեան Կրթութեան: Ծիծեռնակ:

ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ
ԳՐԱՂՂԱԿԱՆ ՍԿՈՒԴԵՐՄԵՆ
ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՐԱՐԱՐԱՆԻՔ

ՃԱՐՈՒ
ՊԱՐՈՆ ԺԱՅԻՄ ՍԻՄՈՆԻ
Տնօրէնի Ակադեմիային
Թարգմանեաց

Եւնք Ս. Այլեւս
Կը գտնուի ամեն Հայ գրաւմանաւոր քով և Պահճե-դարու Սուհի Պօզոս աղային խանութը:

Դին 100 փարայ

ԵՐԱՆ ՀԱՅԿԱԶՆ

ԱՐԱՐԱՐ ԲՈՋԱՅՆ ՀԱՐԱՐԱՐ

Գրեց Եսայի վ. Դեմոքրատի Սպա. հունեայ միտրան Ս. Կարապետի

Ուխտին Տարօնոյ

Կը գտնուի ամեն Հայ գրաւմանաւոր քով և Պահճե-դարու Սուհի Պօզոս աղային խանութը:

Դին 100 փարայ

ԿՐԵՆՈՒՑՈՒՄ

Նուպար-Շահնազարեան վարժարանին վկայագիր ստացած ուսումնական երիտասարդ մը կը փափաքի պատուաւոր տան մը մէջ Հայ. Գաղ. Տաճ. Ընդունաց և բնական գիտութեանց դասատուութիւն ընել գիւրամատչելի պայմաններով:

Ուզողը կրպղոյս գրասենեակը պէտք է գիտէ:

Ի Լ Ա Ն

Ղալաթա-Սէրայի հիւանդանոցն տա վաղի համաժ իքի սէնէլէք օլմագ իւզրէ շուրուր մուգալրէրէ սի իլէ քիրայէ վիրիլէճէկինտէն վէսիմ մէհիտլիէ երկիրմի դրուշ հիւսպը իլէ ինարը շէհրէսի պէշ երազ զրուշա թալիսի Էօհաէսինտէ օլուպ թըրըրնի սանիի բուսինի երկիրմինի բաղար իրթէսի կիւնիւ գարարը գաթիսի ինար օլունահաղընտան տուհա զիտտէ ինար իլէ իսթիմար իթմէյն թալէպ օլունալարն եւեվմը մէղքիւրտէ Տարի Զուրայի ասքէրիլէ կէլմէլէրի:

9 թըրըրնի սանի 1879
Պապը Սէրապէքի

Արեւելահայերէն և Բաղնայինէն առաջնորդած զԼեւոն որ քաջ զարմանա